Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

«ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ (Պ-020-10.09.2021-ԳԿ-011/0), ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ (Պ-020[1]-10.09.2021-ԳԿ-011/0) ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀՀ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

	Առաջարկության, փոփոխության(լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկությունը փոփոխությունը(լրացումը)	Առաջարկությա ն վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի եզրակացությու նը)	Առաջակությո ւնն ընդունելու կամ մերժելու վերաբեր յալ Հանձնաժողո վի որոշումը
1	2	3	4	5	6
	Հեղինակ, ՀՀ կառավարություն	«Զանգվածային լրատվության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին նախագծի 1-ին հոդված	լրացնել նոր 5-րդ կետով հետևյալ խմբագրությամբ. «5) չնույնականացվող աղբյուր՝ համացանցում գրանցված դոմեյն, հոսթինգ ունեցող կայք կամ համացանցային կայքի կամ հավելվածի օգտահաշիվ կամ ալիք կամ էջ (այսուհետ՝ աղբյուր), որի տնօրինողի նույնականացման տվյալները բացակայում են կամ ակնհայտ կեղծ են կամ թերի են, եթե այդ թերությունը թույլ չի տալիս նույնականացնել աղբյուրը տնօրինողին: Տնօրինողի նույնականացման տվյալներն են աղբյուրը տնօրինող ֆիզիկական անձի անունը, ազգանունը, բնակության կամ հաշվառման վայրը, եթե նա լրատվական գործունեությունն իրականացնում է որպես անհատ ձեռնարկատեր,	Ընդունվել է	Ընդունվել է

			ապա նաև պետական հաշվառման համարը, իսկ եթե աղբյուրը տնօրինվում է իրավաբանական անձի կողմից՝ իրավաբանական անձի լրիվ անվանումը, կազմակերպական-իրավական ձևը, գրանցման համարը:»:		
2	Հեղինակ, ՀՀ կառավարություն	«Զանգվածային լրատվության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին նախագծի 2-րդ հոդված	Հոդված 2-ի 1-ին մասի «իր լրագրողին պետական մարմիններում հավատարմագրելու համար չի կարող դիմել» բառերը փոխարինել՝ «լրագրողի հավատարմագրումը պետական մարմիններում ենթակա է մերժման,» բառերով, ինչպես նաև «Պահանջները» բառից հետո լրացնել «Մերժման այլ հիմքերը կարող են սահմանվել համապատաս-խան պետական մարմնում լրագրողների հավատարմագրման կարգով:»:» բառերով:	Ընդունվել է	Ընդունվել է
3.	Հեղինակ, ՀՀ կառավարություն	«Զանգվածային լրատվության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին նախագծի 2-րդ հոդված	Նախագծի 2-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերը հանել:	Ընդունվել է	Ընդունվել է
4.	Հեղինակ, ՀՀ կառավարություն	«Զանգվածային լրատվության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին նախագծի 3-րդ հոդված	Նախագծի 3-րդ հոդվածը հանել:	Ընդունվել է	Ընդունվել է

5.	Հեղինակ, ՀՀ կառավարություն	«Զանգվածային լրատվության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին նախագծի 4-րդ հոդված	Նախագծի 4-րդ հոդվածի «Հրապարակային ելույթի» բառերը փոխարինել «Ելույթի» բառով, իսկ «կամ գրառման» բառը «հրապարկման» բառով:	Ընդունվել է	Ընդունվել է
6.	Հեղինակ, ՀՀ կառավարություն	«Զանգվածային լրատվության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին նախագծի 4-րդ հոդված	Նախագծի 4-րդ հոդվածը լրացնել 2-րդ նախադասությամբ՝ հետևյալ խմբագրությամ«Սույն կետով նախատեսված դեպքում լրատվական գործունեություն իրականացնողը չի ազատվում տեղեկատվության տարածման համար պատասխանատվությունից, եթե այն չնույնականացվող աղբյուրի տարածած տեղեկատվության վերարտադրությունն է՝ անկախ այդ չնույնականացվող աղբյուրին հղում կատարելու հանգամանքից:»:	Ընդունվել է	Ընդունվել է
7	Հեղինակ, ՀՀ կառավարություն	«Զանգվածային լրատվության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին նախագծի 5-րդ հոդված	Նախագծի 5-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետում «գտնվելու վայրը» բառերը փոխարինել «գրանցման համարը» բառերով, ինչպես նաև «ազգանունը» բառից հետո «գտնվելու վայրը» բառերը փոխարինել «բնակության կամ հաշվառման հասցեն,»:	Ընդունվել է	Ընդունվել է
8	Հեղինակ, ՀՀ կառավարություն	«Զանգվածային լրատվության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին նախագծի 5-րդ հոդված	նախագծի 5-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետը հանել:	Ընդունվել է	Ընդունվել է

9	Հեղինակ, ՀՀ կառավարություն	«Զանգվածային լրատվության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին նախագծի 6-րդ հոդված	նախագծի 6-րդ հոդվածի 1-ին մասում «վճարումներից, հովանավորությունից, փոխառությունից, իրական շահառու հանդիսացող անձի կամ անձանց ներդրումներից:» բառերը փոխանիել «մուծումներից, հիմնադիրների ներդրումներից և օրենքով չարգելված այլ աղբյուրներից ստացված ֆինանսական միջոցներից:» բառերով:	Ընդունվել է	Ընդունվել է
10	Հեղինակ, ՀՀ կառավարություն	«Զանգվածային լրատվության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին նախագծի 6-րդ հոդված	Նախագծի 6-րդ հոդվածի 2-րդ մասում «թողարկման մեջ» բառերից հետո ավելացնել «(եթե դա թողարկվում է),» բառերը:	Ընդունվել է	Ընդունվել է
11	Հեղինակ, ՀՀ կառավարություն	«Զանգվածային լրատվության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին նախագծի 6-րդ հոդված 2-րդ մաս	Նախագծի 6-րդ հոդվածի 2-րդ մասից հանել «տեղեկատվություն տարեկան եկամուտների մասին՝» բառերը:	Ընդունվել է	Ընդունվել է
12	Հեղինակ, ՀՀ կառավարություն	«Զանգվածային լրատվության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին նախագծի 7-րդ հոդված	Նախագծի 7-րդ հոդվածում «պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը» բառերը փոխարինել «2022 թվականի հունվարի 1-ից» բառերով:	Ընդունվել է	Ընդունվել է

13	Հեղինակ, ՀՀ կառավարություն	Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում փոփոխություններ եվ լրացումներ կատարելու մասին նախագծի հոդված 1-ին	Նախագծի 1-ին հոդվածի վերնագրում «միջոցի» բառից հետո ավելացնել «թողարկման» բառը	Ընդունվել է	Ընդունվել է
14	Հեղինակ, ՀՀ կառավարություն	Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում փոփոխություններ եվ լրացումներ կատարելու մասին նախագծի հոդված 1-ին	Նախագծի 1-ին հոդվածի վերնագրից հանել «կամ օրենքով արգելված աղբյուրներին հղում կատարելը» և «աղբյուրների թափանցիկությանն ուղղված» բառերը	Ընդունվել է	Ընդունվել է
15	Հեղինակ, ՀՀ կառավարություն	Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում փոփոխություններ եվ լրացումներ կատարելու մասին նախագծի հոդված 1-ին 1-ին մաս	Նախագծի 1-ին հոդվածի 1-ին մասից հանել «տարածումը, որում ներկայացված չեն օրենքով սահմանված տվյալները կամ զանգվածային լրատվության միջոցի՝ ֆինանսավորման աղբյուրների թափանցիկությանն ուղղված» և «միջոցը՝» բառից հետո ավելացնել «ֆինանսական» բառը:	Ընդունվել է	Ընդունվել է
16	Հեղինակ, ՀՀ կառավարություն	Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում փոփոխություններ եվ լրացումներ կատարելու մասին նախագծի 1-ին հոդված 2-րդ մաս	Նախագծի 1-ին հոդվածից հանել 2-րդ մասը:	Ընդունվել է	Ընդունվել է

17	Հեղինակ, ՀՀ կառավարություն	Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում փոփոխություններ եվ լրացումներ կատարելու մասին նախագծի 1-ն հոդված 3-րդ մաս	Նախագծի 1-ին հոդվածի 3-րդ մասում «վեց հարյուրապատիկից հազարապատիկի չափով» բառերը փոխարինել «հինգհարյուրապատիկից յոթհարյուրապատիկի չափով:» բառերով	Ընդունվել է	Ընդունվել է
18	Հեղինակ, ՀՀ կառավարություն	Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում փոփոխություններ եվ լրացումներ կատարելու մասին նախագծի 1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդվածում ավելացնել նոր 5-րդ մաս հետևյալ բովանդակությամբ՝ «5. Ձանգվածային լրատվության միջոցի տարածումը, որի թողարկումը չի պարունակում օրենքով սահմանված թողարկման տվյալները՝ առաջացնում է տուգանքի նշանակում լրատվական գործունեություն իրականցնողի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով:»:	Ընդունվել է	Ընդունվել է
19	Հեղինակ, ՀՀ կառավարություն	Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում փոփոխություններ եվ լրացումներ կատարելու մասին նախագծի 1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդվածում ավելացնել նոր 6-րդ մաս հետևյալ բովանդակությամբ՝ «6. Նույն խախտումը, որը կատարվել է կրկին՝ վարչական տույժի միջոցներ կիրառելուց հետո մեկ տարվա ընթացքում՝ առաջացնում է տուգանքի նշանակում լրատվական գործունեություն իրականացնողի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից վեցհարյուրապատիկի չափով:»:	Ընդունվել է	Ընդունվել է

20	Հեղինակ, ՀՀ կառավարություն	Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում փոփոխություններ եվ լրացումներ կատարելու մասին նախագծի 3-րդ հոդված	Նախագծի 3-րդ հոդվածը հանել:	Ընդունվել է	Ընդունվել է
21	Հեղինակ, ՀՀ կառավարություն	Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում փոփոխություններ եվ լրացումներ կատարելու մասին նախագծի 5-րդ հոդված	Նախագծի 5-րդ հոդվածում ուժի «մեջ է մտնում» բառերից հետո ավելացնել «2022 թվականի հունվարի 1-ից:» բառերը:	Ընդունվել է	Ընդունվել է
22	Հեղինակ, ՀՀ կառավարություն	Նոր նախագիծ. «Քաղաքացիական օրենսգրքում» լրացումներ կատարելու մասին օրենքի նախագիծ	Կատարել լրացում Քաղաքացիական օրենսգրքում: Օրենսգրքի 1087.1 հոդվածի 6-րդ մասը լրացնել հետևայլ բովանդակությամբ. **Ա) «Հոդված 1.** Հայաստանի Հանրապետության 1998 թվականի մայիսի 5-ի քաղաքացիական օրենսգրքի 1087.1-ին հոդվածի 6-րդ մասում՝ 1) «ելույթի» բառից հետո լրացնել «, հրապարակման» բառով. 2) լրացնել հետևյալ խմբագրությամբ նոր պարբերությամբ. «Սույն մասով նախատեսված դեպքում լրատվական գործունեություն իրականացնողը չի ազատվում վիրավորանքի կամ զրպարտության համար	Ընդունվել է	Ընդունվել է

			պատասխանատվությունից և կրում է փոխհատուցման պարտավորություն, եթե իր արտահայտած կամ ներակայացրած փաստացի տվյալները «Զանգվածային լրատվության մասին» օրենքով սահմանված չնույնականացվող աղբյուրի տարածած տեղեկատվության վերարտադրությունն են՝ անկախ այդ չնույնականաց-վող աղբյուրին հղում կատարելու հանգամանքից:»: Բ) Համապատասխանաբար, սահմանել ուժի մեջ մտնելու ժամկետ. **«Հոդված 2.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2022 թվականի հունվարի 1-ից:»		